

## VIII. ՀՀ 2009թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՍԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2009 թվականի համար «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան նախահաշիվների նկատմամբ ծախսը կատարվել է.

- Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (01.03.02.01) ծրագրով դրամարկղային ծախսն առ 01.01.2010թ. կազմել է 602174.0 հազ. դրամ՝ նախատեսված 641819.7 հազ. դրամի փոխարեն կամ կատարվել է 93.8%-ով (2008թ.-ին՝ 96.6%): 2009թ.-ին դրամարկղային ծախսը 2008թ. համեմատությամբ նվազել է 345.6 հազ.դրամով (2008թ.-ին կազմել է 602519.6 հազ.դրամ):
- Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում (01.03.02.02) ծրագրով դրամարկղային ծախսն առ 01.01.2010թ. կազմել է 278191.7 հազ. դրամ՝ նախատեսված 292563.9 հազ.դրամի փոխարեն կամ կատարվել է 95.1%-ով (2008թ.-ին՝ 95.9%): 2009թ.-ին դրամարկղային ծախսը 2008թ. համեմատությամբ աճել է 36295.1 հազ.դրամով (2008թ.-ին կազմել է 241896.6 հազ.դրամ):
- 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում (01.03.02.04) ծրագրով դրամարկղային ծախսն առ 01.01.2010թ. կազմել է 44803.0 հազ. դրամ՝ նախատեսված 58804.2 հազ.դրամի փոխարեն կամ կատարվել է 76.2%-ով:
- 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման համար կարողությունների զարգացում (01.03.02.05) ծրագրով դրամարկղային ծախսն առ 01.01.2010թ. կազմել է 11490.4 հազ.դրամ՝ նախատեսված 17200.0 հազ.դրամի փոխարեն կամ կատարվել է 66.8%-ով:
- Միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով 2009թ. մուտքը կազմել է 1683.1 հազ.դրամ, այդ թվում՝
  - «Տասիս» (Վիճակագրություն 10) ծրագրի շրջանակում՝ 1683.1 հազ.դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 2355.7 հազ.դրամ (ներառյալ տարեսկզբի մնացորդը): Ծրագիրն ավարտված է:
  - «ՄԻԴԱ-Սոցիալական վիճակը Հայաստանում» ծրագրի շրջանակում՝ գումար չի մուտքագրվել, տարեսկզբի 442.2 հազ.դրամ մնացորդից դրամարկղային ծախսը կազմել է 321.8 հազ.դրամ:

Ընդամենը երկու ծրագրերի գծով առ 01.01.10թ. դրամարկղային ծախսը կազմել է 2677.5 հազ.դրամ: